



Ա. Ղ. Գ. Ա. Յ. Ի. Ն

ՏՆՕՐԷՆ ԽՄՐԱԳԻՐ

ԵՒ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

ՆԻԿ. Ս. ԹԻԻՎՊԵՆՏՅԱՆ

ԽՄՐԱԳՐԱՏՈՒՆ

Ղալաթիա Բէրլինգէ Բազար
Խոտի Խոտի գէմը Սամուր ֆոս
Գոց Թիւ 12

ԹԵՐՐՈՂ 40 ՓԱՐԱՅ

Ա. Ղ. Գ. Ա. Յ. Ի. Ն

Հայկական խնդրոյն վրայոք 12 երեսօխոխաններէ ստորագրեալ հարցապնդմանն ի պատասխանի, Ս. Պատրիարքին յու. 21ի ընդհ. Ժողովոյ նիստին տրուած երկար բացատրութեան գրոյն վրայ Բուրիէ խորհրդածութիւն մ'ընելով, ասկէ հետեւեալ մասը հարկ կ'համարիմք յառաջ բերելը

«Կան մարդիկ որ, կըսէ Բուրիէ, կ'կարծեն թէ Ա. յովն. ֆո. նօր դաշնագրին 16-րդ յօդուածին խմբագրութեանը մէջ բնաւ Ներսէս Պատրիարքը մասն չունի. բայց այս ըսողներն անոնք ըլլալու են՝ որք կ'պնդէին թէ Պատրիարքը առաջին անգամ երթալուն Նիքոլա մեծ Դքսէն չէր ընդունուած, թէ այդ 16րդ յօդուածը՝ Գոսկուայի մէջ Չարին բրած յայտարարութեանը բնական հետեանքն էր, և թէ Հայոց ազգութիւնը կլլելու, լեզուին շնչելու և կրօնքնին ոչնչացնելու դիտում տածող Չարին կառավարութիւնը հրատարակուած բաստանող պատրիարք մը չէր կրնար ուս լիազօր փոխանորդներէն բարեբարութիւն հայցել ի նպատակ իւր ժողովուրդեան, զի յայտնի է թէ Ա. յովն. ֆո. նօրի դաշնագրին մէջ Հայոց ալ յիշատակութիւնն ընել տալու համար՝ ուս փոխանորդներուն պէտք պիտի ըլլար դիմելը

«Պատրիարքը 16րդ յօդուածը կ'գովէ և ատոր մէջ Հայոց շահելիք օգուտները կը տեսնէ. բայց միւս քրիտանեայ հպատակաց վաստկածին նայելով, Հայերունը ոչինչ բան մը կը գտնէ:

«Ա. յովն. ֆո. նօրի դաշնագրին փոփոխութեան ենթարկուելին իմանալուն պէս, պատրիարքը լուր կառնէ թէ այդ յօդուածը

ճը բոլորովն պիտի շնչուի, իսկ պատրիարքն ինքք թէպէտ բոլորովն շնչուելուն չհաւատար, բայց կ'վախնայ որ պիտի փոփոխուի, ուստի և այս փոփոխութիւնն ալ Հայոց նպատակար կերպիւ ընել տալու համար, այդ 16րդ յօդուածին մէջ ներմուծուելիք բարեփոխում մը կառաջարկէ ինքք և երկու հայ եպիսկոպոսներ պատուիրակ կը կարգէ երթալ Եւրոպա Հայոց իրաւունքը պաշտպանելու, որոնք ամեն ուրեք սիրալիր բնութիւններ լինեն և յուսալից խօստուհներ ստանալէն յետոյ վերջապէս Պերլին կ'հասնին:

«Բօնիւրէն Հայոց Պատրիարքին պատգամաւորաց պահանջումներն լսելէն յետոյ 61րդ յօդուածը կորոչէ, որ ճշդիւ Պատրիարքին ուղածը չէր: Բայց որո՞ւ էր յանցանքը. — այն նենգաւոր Անդղիոյ, որ Հայոց շահերը յս. կի անկո-տաճկական դաշնագրութեանը զոհեց:

«Ներսէս սրբազանը համոզուած է որ եթէ Անդղիա ունեցած չըլլար, յիշեալ դաշնագրութեամբ, ինքք Ասիոյ մէջ բարենորոգումներ մտցնելու ձախող գաղափարը, Հայաստանի մէջ հայկական վարչութիւնը արդէն սպառհափուած գործ մնէր:

«Երբ կ'տեսնէ մարդ Պոսնայի, Ալպանիոյ և Բոսորի մէջ անցած անցքերը, կատարուած հարցները իւրովի թէ Ներսէս սրբազանի խնդրած հայկական վարչութիւնը գործադրելի՞ և յարմարաւոր էր միթէ Հայաստանի մէջ, որ Հայոցմէ աւելի են մահմետական ժողովուրդներն:

«Բայց ամենէն աւելի տարրինակ բանը սա է որ Գիւրտերը, այդ վայրենի և պատերազմասէր ժողովուրդը՝ իրմէն թուով քիչ-որ ժողովուրդի մը լիջախութեան տակը գնելու գաղափարն ալ կ'ունենան, այնպիսի

ժողովուրդի մը՝ որ դարերէ ի վեր Գրդած ձեռքն ու հաճոյիցը մատնուած ու ենթարկուած է իբրև ստրուկի Կ'հարցնեմք արդ թէ՞ Կերէք Գիւրտերն յանձն կառնուին որ կառավարուին ու հպատակին Հայերուն, Հայերուն՝ զորս իբրև գերի կամ Բարի (անարգեալ ժողովուրդ մը) կ'նկատեն, ուստի և կ'զարմանամք ոմանց չոյած ու գըգուած այդ ցնորիցը վրայ, որք կամ ողջամտութիւն ունենալու չեն, և կամ անկեղծութիւն:

«Իսկ ամենէն աւելի դիմող զարմացնող բան մը եթէ կայ, այն ալ սա է թէ, Ներսէս սրբազանը իւր այս ինքնավարական ձեռնարկին մէջ միշտ կը գործէ, առանց օտմ: կառավարութեան գոնէ մէկ յանդիմանութիւնը իր վրայ հրաւիրելու, և ոչ նուազ ևս զարմանալի է որ Բ. Դուռն ինքն ալ արտօնութիւն կ'տայ Ներսէս սրբազանին որ գաղտնանիչ հեռագրաւ հաղորդակցի իւր պատուիրակացը հետ:

«Ուստի Պատրիարքին խնդիրքը նկատողութեան չառնը ունեցաւ, ինչպէս որ արժան էր Այս անյաջողութեան մէջ ամեն ոք պատասխանատուութեան մէկ մէկ մաս ունի բաց ի Պատրիարքէն: Նախ անոնք՝ որք կը կարծէին թէ — և զայս ըսողը նոյն ինքն Ներսէս սրբազանն է — Պատրիարքն այնպիսի եղանակաւ մը գործեր էր դիտամար որ կ'իսով չափ յաջողի գործոյն մէջ, Պատրիարքը խստիւ կ'դատապարտէ սոյն առարկութեան հեղինակներն, ըսելով թէ ասի ազգին յատուկ եղած ախտէ կամ մարութեան մը յառաջ կը գայ: Ահաւասիկ բուն իսկ իւր խօսքերն:

«Այս առարկութիւնը մերայնոց մէկ քանիներն կընեն, և ասի ցոյց կ'տայ անդամ մն

«ալ թէ ինչ գէշ ազգեցութիւն «ըրած է ազգին վրայ այն ըստ «աբղիւթիւնը, որով յամառ «անվատահութիւնը մեր ազգին «յատուկ բարք մ'երդեր է:»

«Չենք գիտեր թէ ստուղիւ այդպիսի առարկութիւնն ընող մ'եղած է Հայոցմէ, բայց եթէ ընող մ'ալ գտնուած լինի, յանցանք մնէ ասի իրենց, Հայերն մինչև ցայսօր այնքան խաղալիկ եղեր են զիրենք ազատել կարծեցնող ազգակիցներուն ձեռքը, որ իրաւունք ունէին այս ձեռնարկին ալ անկեղծութեանը վրայ տարակուսելու (1) ինչ:

(1) Դժբաղդաբար այդ կասկածոտ հայերն այն ժամանակ ամենայն կատարեալ վատահութեամբ և մինչև իսկ կարելի է ըսել անկարագրելի նախապաշարմամբ մը՝ ներկայ ձեռնարկին լիւրի յաջողութեանը վայրկեանէ վարկեան սպասելու անդիմադրելի հոսանքի մը բռնուած էին, մինչև իսկ մէկուն թագուհւոյն գահոյից պատուանդանին վրայ կենայլը, եւ միւսին կլտաբութիւն հետ բրած շաղկապատութիւնը իրենց տչքին առջև՝ Հայոց խնդրոյն ընդունուած ըլլալուն 0/0ին 99 անսուտ նշաններն էին, և երբ դիպուածով երէր մէկը ըսել իրենց թէ — «Եթ'դճ մարդիկ այդպիսի ազգական արարքը՝ այնքան մեծ կարևորութիւն վերցնող բաներ չեն», անկէ աւելի դաւաճան և ազգին մատնիչ մարդ չէր գտնուէր հասարակութեան համար, անոր համար չէր որ հաւատար հայ պատուիրակաց յաջողութեանը:

Ուստի և սխալ է Գուրիէի կարծածը՝ թէ Հայերն այն ատեն իրաւունք ունէին տարակուսելու, իսկ անոնք որ կ'տարակուսէին՝ անոնք ուրիշ ձեռք գործիք կամ խաղաղիք չէին եղած:

այնս որ ետքէն դէպքերն ալ սուտ չհանդիպին ասոնց կասկածը, իսկ Ներսէս Պատրիարքը կը մոռնայ թերևս իր Հայոց ազգին գլխին ըլլալը, որոյ վրայ տեսած թերութիւններն իւր պատկառելի անձին ալ կրնան վերաբերել:

Պատրիարքը երկրորդ առարկութիւն մ'ալ կ'ընշատակէ, որ օտարէն կ'գայ բարեբարդարար Հայոց համարներն Ներսէս սրբազանին թէ՛ իւր «ազգին փափաքն ու իզճը կոչածը՝ նոյնիսկ իր հնարած բանն է» Այս երկրորդ առարկութիւնն ալ իրօք եղած է կամ ո՛չ, չգիտեմք, իսկ սա՛ ստոյգ է որ եթէ իրօք եղած է՝ ատի Անդղլոյ կողմէն չէր կրնար բլալ, զի Սալիզպրի մարզի գրեթէ սոսիս սրբազանին իւր օգնութիւնը մերժելու համար պէտք մը չունէր այդպիսի յայտարարութեանց դիմելու, զի թագուհւոյն պաշտօնեայն խորհրդարանին մէջ ըսեր էր թէ «Հայերը ինքնապարական գրութեան մը համար այնքան չեն դեռ հասունցած»: Միւս կողմէն եթէ Լ'րտ Սալիզպրիէն առ Սըր Լալարա ուղղեալ մյս. 16 հեռագրին նայեմք, կ'տեսնեմք որ նոյն իսկ Պատրիարքին պատուիրակն եղող յորմեան սրբազանին վերկայութեանը համեմատ Ասիոյ Տաճկներն ալ Հայոց չափ քերքերուն հարստահարութեանց երեսէն կ'նեղուն եղեր: Այս խոստովանութենէն ետքը Հայոց պատրիարքը ինչպէ՞ս կըրնար պահանջել որ միայն Հայոց ի նպատակ քաղաքական վարչապիւս գրութիւն մը հաստատուի և Տաճկներն մէկդի թողնին: —Ասի սրբազանութիւնն եղած չ'էր լինել:

«Իսկ Ներսէս սրբազանի պէս մէկու մը համար ասանկ չէր Սալ ըստք կ'բառնայ իրեն քաջախիզան խոստովաններ տուողներուն և պաշտօնական յայտարարութիւններ ընդհանրուն մտա, հրաժարել կ'պառնայ, ուստի և Քոնկրէնին ալ խելքը գըրուիսր գալով, կ'որոշէ որ փոխանակ Քի Պետութեան, բոլոր մեծ տերութիւններն ըլլան հսկող Ասիոյ բարեկարգմանց գործադրութեանը վրայ Յիմար է ով որ չուզէ հաւատար:

Ներսէս սրբազանն իր խօսքը չաւարտած, հայկական վարչութեան փոխան՝ վաստակած օգուտները կ'ընէ, որք են 1) Հայոց անունը առաջին անգամ հանդիսապէս անցեր է դաշնագրութեանց մէջ, —ի՛նչ մեծ փառք: 2) Հայերն ազատեր են իրենց վրայ ծանրացած հարստահարութենէն: —հարցէ՛ք աւելի վստայ, Մշոյ և Պայազիտի

Հայոց: 3) Հայոց ապագային հիմք ձգուեր է: 4) Երրորդայի ժողովուրդներն ու կառավարութիւնները ճանչցեր ու սիրեր են Հայոց ազգը:

«Ահա առիկ անգնահատելի օգուտներ, որոցմէ Հայերն եթէ գոհ չըլլան կ'սխալին:

Ներսէս սրբազանն կ'վերջացնէ խօսքը յորդորելով Հայերն որ Հայաստան գտնան, հայ եկեղեցականք, վարժապետք, փոճառականք և արուեստաւորք խմբովին հոն երթան, ուր ո՛չ ես ես սով, մահ, տարածած և հարստահարութիւնք, և ո՛չ ևս բռնաբարութիւն կենաց, ընչից և պատուոյ, և ուր՝ խել մը բարեբանութի մի բան, Հայաստան՝ ըստ Ներսէս սրբազանի՝ աւետեաց երկիր մը գարձեր է:

Մահաւարժամի մասին կը հաւատամք Պատրիարքին ըսածին, իսկ միւս թուած օգուտներուն համար՝ մեզ այնպէս կ'երի թէ Ներսէս Սրբազանը իր իզճերն իրր իրականութիւն ըմբռներ է:

«Այս է Ն.Սրբազանութեան բոլոր խօսից խմբար, յորում փոխանակ իրեն եղած հարցմանը պատասխանելու, կ'ջանայ ի վեր հանել այն կարծեցեալ օգուտներուն կարեւորութիւնը՝ զոր կ'կարծէ ձեռք բերած ըլլալ ֆօնկրէնէն, որոնք ըստ մեզ օգուտ մ'ըլլալու երեւոյթն անգամ չունին, իրաւունք կ'տան մեզ ինչ որ պատահած է Հայաստանի մէջ ֆօնկրէնի գոցուելէն ի վեր: Ասիայի հայերն, որոցմէ Կ. Պօլիս գտնուողներուն թիւը 100 հազարի կ'իջնէ, զորս կ'յորդորէր Պատրիարքը երկիրին գառնալ, չէնք կարծեր որ իրենց հոգեւոր գլխոյն համոզումն ունեցած ըլլան: Ասի այնքան ստոյգ է որ հազարաւոր հայ ընդունիք գաղթել կ'արտօրան:

«Հայկական վարչութիւնը, զոր ձեռք բերել նախցան, արբուեր ալ նէ՛ գարձեալ բնաւ օգուտ և դարման մը պիտի չունենար Ասիոյ Հայոց կրած ստաւապանացը: Հայոց բարօրութիւն մը տալու համար, վարչական անձանց փոփոխութենէն ուրիշ բան պէտք է, Հասան բաշոյին տեղ Գրիգոր էֆ.ին անցնելովը վարչական գրութիւնը չբարեփոխել, ընդհակառակն աւելի կ'գէշնայ: Ամեն ուր որ ոչ-մահամտական պաշտօնեայնք գործածուեր են, ասոնք իրենց մահամտականախորդներն ընտել տուեր են:

Հայերը Բրդոստ հարստահարութենէն ազատելու համար, ուրիշ աւելի մեծ փոփոխութիւններ պէտք են քան զոր չէ

վարչական ինքնօրինութեան մը հաստատութիւնը . . .

«Յաջորդ յօդուածով մ'ալ պիտի քննէք թէ ի՞նչ բանի մէջ պէտք է կայանան այդ փոփոխութիւններն:»

ՉՄՇԿԱՄԱԳ

3 օգոստ. 78 ի Չճկամագ . . . խմբագիր:

Չեր ազգօգուտ Լրագրին ներկայ յլս. 18 թիւ թիւթին մէջ, Չճկամագ վերնագրով յօդուած մի կարգացի, որ լի էր անտեղի զրպարտութիւններով: Անանուն նամակագիրը ասպարէզ կ'ենէ իւր ճոռոմարանութեամբը նախանձէ և տտելութենէ շարժեալ, կերպ կերպ անհիմն և անտեղի փառած խօսքերով կուզէ Արիկեան Աւետիսէֆի անունը միտել, և հայրենասիրաց սրտեր կիզեքել, որպէս զի այս կերպով Արիկեան վհատեցնէ ազգային գործոց այլևս ձեռնարկել: Արիկեան երբէք կարեւորութիւն չըտար Քոնկրէնի գրութեանց և չլիտար ազգասիրաբար գործելէ, բայց ես պարտ անձին համարեցայ ճշմարտութիւնը գրելով հանդերձ իւր ներկը հրապարակ հանել, խմբագիր Տէր, անստորագիր նամակագիրը, ելեր խել մը սուտեր բարդեղով, ըսեր է թէ Արիկեան քաղաքիս մէջ երեք Պէյերու ապաւինած, քրդաց հարստահարութեանց մնացորդը իր արբանեակներովը ժողովրդեան զլսուն կ'տեղայ, Սքանչելի սքառութիւն, այսպիսի փափուկ ատենի մը մէջ, Արիկեանի ազգին ըրած ծառայութիւնք խիտ շատ են, և եթէ Արիկեանի քաջախիտութիւնք և աշխատութիւնք չըլլային, Չճկամագ ու խեղճ ժողովուրդք արդէն գաղթած և ցիրուցան եղած էին, բայց Արիկեան ամենայն զոհողութեամբ, աղետից առաջը առնելու համար, անքուն ակամբ հսկելով աշխատեցաւ ժողովրդեան բեռ թեթեւեցնելով փոխանորդութեամբ հասարակաց, իւր քսակէն իսկ ծախսեր բնելով քանի քանի անգամ կուսակալին գնալով ներկայացաւ, և դարման խնդրելու յոյսով անձնուիրաբար մեծամեծ զոհողութիւններ ըրաւ, մինչև անգամ բարբարոս քրդաց բարկութիւնը իւր վրայ գրգռեց, որ կուզէին Արիկեանի կեանքը բառնալ աշխարհէս, այնպէս որ ստիպուած էր միշտ առաջ մարդով իր անձը և իւր գոյքը պահպանել, և սոյն բարբարոսութեանց փոխարէն իջնել հրապարակ և ըսել թէ «մէկ կողմէն ոստիկանութիւնը և միւս կողմէն բարբարոս Բիւր-

տերը պաշտպան ունենալով մարդ կարող չէ նորա դէմ ելնել, քանզի կամ բանտ է գըտնելիք կամ մահ:»

Նամակագիրը միթէ չկար մրրեցաւ երբ այս տողերը կը գրեր, բայց ինչու կարմիր որովհետեւ մութի մէջ կ'գործէ, քանզի քաջ գիտէ որ ամէն Արիկեան ճանչցողները նոյն նամակագրոյն հիշինակին զըուանք պիտի օտն, շատ բան որ չէ ըսեր յիշել ճոռոմարանը թէ Արիկեան թուրքիոյ բոլոր բնակչաց տունը արեց, պատերազմ հըրստարակել տալով, քանզի անտեղի գրութեան մի, նոյն իսկ յօդուածէն կրնայ տեղեկանալ մարդ յօդուածագրոյն արժէքը, որ կերպ կերպ տէրութեան պահանջները Արիկեանի յատկացնելով կ'յաւելու թէ հիմակ ալ ելեր վիճակը բաժին ընելով գնացեր են կրկնակի տուրք հաւաքելով կոկորդին լեցնել: Ըսել է որ Արիկեան կուսակալն ևս իր բան ընկեր ընելով հարկ չեղած տուրքեր հրաման կընէ որ Արիկեան հաւաքէ, էհ ալ ըսելիք չմտար . . . Ահա բուն իրողութիւնը: Կուսակալը վիճակիս թշուառութիւնը նկատելով և տէրութեան գանձուն ստիպողականութիւնը ճանչելով քանի մը Հայ զիւղերու սրոց հաւաքումը Արիկեանի կ'յանձնէ, որպէս զի ժողովուրդը չընկողի, և թէ սրոց հաւաքման օրինաւոր բաշխում չինելով հանդերձ ի հարկին ստակ հաւաքուի, այնպէս որ բոլոր Արիկեանի դէմ եղող գիւղացիները գոհ են իրմէն Հիմայնամակագրոյն խօսքերուն ինչ աւուն տամք չգիտեմ:

Ահա ցայտմ Արիկեան հոս չէ խօզտ կ'գտնուի, բայց Արիկեան ուր որ երթայ երբէք չգաղբիր ազգային բարիքը ննել, եթէ չես լսեր՝ ահա լսէ մէկն ալ: Այսօր Արիկեանն նամակ եկաւ թէ խօզտ են, որ Արաբկիրու Սաղմկայ գիւղի բարբարոս քրդերու կողպտած ինքերը գողցողները բանտարկել տուեր և Առաջնորդին նամակ եկաւ որպէս զի անմիջապէս մարդ գրկուի ի Սաղմկայ որ անմիջապէս գողցուած ապրանքներն երթան առնեն:

Ահա գրեցի ոոյն ճշմարտութիւնները յայտնի հրապարակաւ, որպէս զի խելութիւնը իմանան ամենքն ալ:

Խմբագիր տէր կ'խնդրեմ անկողմնակալ օգուտ ձեր ազգօգուտ Լրագրին մօտակայ մէկ թերթին մէջ հրատարակէք սոյն ճշմարտութիւնները, որ համայն Չճկամագու ժողովրդեան համակրութիւնը ձեր վրայ պիտի դարձունէք ձեր անկողմնակալութեամբը:

Որով մտամ ակնկալու Մանուկ Ա. Չօլաթեան

Կ'լուծմը թէ անգղ. դեսպա- նին այս էշ. որ յատկապէս Բ. Պուռը գալով մեծ Եպարդոսին հետ տեսակցելու, դեսպանին քրտնալուծեանցը վրայ, Եպարդոսը յայտնեց թէ ինչ ու յոշուած է արգէն որ Ասիոյ գաւառաց մէջ խել մը պաշտօնաւորներ փոխուելով տեղերին քրիստոնէայ պաշտօնավարներ պիտի դուրսն, և թէ վեհ. Սուլթանն իսկ այս մասին իւր հաւանութիւնը տուեր է: Այս փոփոխութեանց մէջ՝ կ'կարծեմք գիտնալ թէ, եթէ ոչ Հայաստանի բոլոր գաւառաց, գէթ Կարնոյ և վտնայ գաւառներուն համար Հայագրի կուսակալներ պիտի անուանին, որոց համար արգէն մէկ քանի Հայ պաշտօնավարք իր բնութիւնը ներկայացուած են Սուլթանին:

Իսկ ընդհ. ժողովոյ վերջին դանդաղ նիստին մէջ Ս. Պատրիարքին տուած բացատրութեան կ'իմացուի թէ անգղ. դեսպանին հետ Ն. Սրբազնութեան քրտնալուծեան անսակցութեան մէջ, Սըր Լայարտ բնաւ այնպիսի սեւ խոստում մը չէ բերը Ս. Պատրիարքին, որ Կարնոյ կուսակալ իմասիլ Հագգը բաշան հրատարակել պիտի ապ, ինչպէս ծանուցած էին աղագալին թերթերէն ս. մանք:

Նմանապէս կ'լուծմը թէ Ս. Պատրիարքը Սըր Լայարտի հետ ունեցած մտերմական տեսակցութեան մէջ, յորում Կարնոյ Թարութիւն սրբազանէն քաշուած հեռագրերը ցոյց տալով, տաճկաց սոսկալի ոպտունալեացը զէմ հարկ եղած միջնորդութիւնն ու միջոցներ խնդրեր է, անգղ. դեսպանը յայտնեց Ս. Պատրիարքին թէ իւր ստացած տեղեկութեանց նայելով Կարնոյ մէջ ընդհակառակն Հայերն են եղեր որ սպառնալիքներ կ'ընեն եղեր տաճկաց զէմ:

Չեմք գիտեր թէ որքան ըստուգութեան կարօտ է Սըր Լայարտի ստացած այդ տեղեկութիւնը, զի աւտղ միտք ունեցողի համար անկարելի է հաւատալ որ ամբողջ ուսուական գրաւման միջոցին՝ տաճկաց հետ բարեկամարար վարուող Հայերը՝ ուսուաց ետ քաշուելու պահուն՝ տաճկաց զէմ սպառնալիքներ ընելու երևեն: Այս բանին հաւատալու համար՝ յիմար մ'ըլլալու է:

Գերմանական դեսպանին քարտուղարին կողմանէ շր. առաւօտ նամակ մը հասաւ ի Պատրիարքարան, որ կ'իմանուցանէր թէ վրան. դեսպանը

Սուլթանին ներկայանալէն յետոյ՝ Ս. Պատրիարքին ալ պիտի գայ նոյն օրը այցելութիւն մը տալու:

Ս. Պատրիարքը նոյն օրը մինչև երեկոյ Պատրիարքարանը կուսասէր, իսկ դեսպանը թերևս ուշ մնալով, Պալատէն մեկնելուն Բ. Դուռն ալ հանդիպած ըլլալուն համար, նոյն օրը ժամանակ չէր ունեցած Գումգարոյի Պատրիարքարանն ալ գալ, իսկ թուի թէ Հացֆէլտ կոմսն այսօր պիտի տայ իւր այցելութիւնը Ս. Պատրիարք Հօր:

Երամեան բարձր. Աբրահամ բաշա, որոյ շր. օր մայրաքաղաքս հասնելը ծանուցուած էր, նոյն օրն եկած չըլլալով, այսօրուան Պրինտիզի շոգեհաւով գալը կուսասիր:

Բ. Դրնէն Պատրիարքարանը զրկուած գրութիւն մը կ'իմացանէ թէ, Սըր վանքին գողցուած արխանոց մէկ մասն ալ ձեռք անցընելով տեղական կառավարութիւնը՝ վանքին դարձուցեր:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԵՄԱՆՈՒՅՈՒՄ Ս.ՁԻ. ՎԱՐՁ. ՏՆՏԵՍ. ԽՐՀՐԳՑ.

Խառնի զի եկեղեցւոյ սընտուկին 1877 տարւոյ ելումտից հաշուեցոյցը բոս օրինի Տնտես. խորհրդոյ ներկայացուած և ա. նոր յար և նման օրինակը թաղ. խորհրդոյն յուղարկուելով հըրահանգ տրուած է եկեղեցւոյ բակը կախել ի տես թաղեցւոց: Հետեւապէս Տնտես. խորհուրդն հրաւեր կ'կարգայ այսու պաշտօնական ծանուցմամբ պատուարժան թաղեցւոց, որ սոյն հաշուեցոյցին վրայ որևէ բողոք կամ դիտողութիւն եթէ ունին, թուականէս 21 օրեայ պայմանաժամաւ գրաւոր կերպիւ ներկայացնեն Տնտես. Խորհրդոյ:

Սոյն պայմանաժամը լրանալէ ետև օրը կամ գիտազուլթիւն անլսելի պիտի մնայ: 8 սեպտեմբեր 1878

Ի Պատրիարքարանի Հայոց Կ. Պոլիս

Վերլուարկ թիւ 780. 6 սպտմ. — Երես երկրորդ, էջ երկրորդ տող 19 «ամէն մ'ի վեր» խօսքը պիտի ըլլայ «սպտմ. 3ին» նաև նոյն էջին 23րդ տողը «հոս գտնուող հայրենակից պանդուխտներէն ալ երկիր դառնալ ու զոյններուն վերադարձը օգնութեամբ և նպաստաւք զիւրացընել» պարբերութիւնը պիտի ըլլայ «կարելի եղածին չափ պանդուխտութեան առաջն տունուր»:

ՀՆՈՒՍԳՐԱԼՈՒՐՔ

Վիէննա 21 սպտմ. Պիհալի շրջակայքը երկար արիւնհեղ կռիւներէն յետոյ, առաջի երկու տմբութիւններն ապստամբաց ձեռքէն առնուեցան Պիլինցքի և Իլվորնիքի մէջ տեղը վճառական ճակատամարտ մը կուսասիր:

Բարիդ 20 սպտմ. Գանձուց պաշտօնեայ Պ. Լէոն Սէյի հրատարման զրոյցը սուտ ելաւ:

Օտէսա 21 սպտմ. Նիհիլիսթ բանտարկեալներն բանտէն ազատելու համար կազմուած գաղտնի Գոմիթէի մ'ե. րեան երևելուն վրայ, նորէն շատ մ'անձինք ձերբակալուեցան:

Պէրիլուա 21 սպտմ. Պոզովնայի առաջը աւտար. զորաց ըրած մեծ յաղթութեանը վրայ, ապստամբք սկսած են Սրպիոյ սահմանագլխէն ներս անցնելով ապստամբիլ, որոնք Սրպիոյ կառավարութեան կողմէն զինութափ ըլլալով կ'ձերբակալուին:

Սրպիոյ կառավարութիւնը ի հարկին պիտի աւելցնէ սահմանագլխոյն վրայ հսկողութեան համար զորուած զինուորական շրջանակին թիւը:

Ս. յո սուտոյ հասած Բարիդ 22. — Լա Բէրլիպիք Ֆրանսէզ թերթը Երոպայի վիճակը գնահատող իր մէկ յօդուածը սապէս կաւարտէ: «Պիլ. մարք իշխանին խոհականութիւնը օրինակ ունենը. սեւէ գործ շատանձնենք, յրջահայեաց ընթացք մը բունենք կե. նանք, զի ոչ վտանգներու ժամանակը անցած է և ոչ առաջարկութեանց ու փորձութեանց ժամանակը»:

Գաղղիա և Անգղիա տակալին անհամաձայն են Եղիպտոսի նախարարութեան կազմութեանը մասին:

Պէրլին 21. — Ամիրալ Հօլլորթ բաշա Լինարայէն գալով այս առաւօտ Պէրլին հասաւ, երեկոյին ալ վիէննա պիտի մեկնի:

ԳՐԱՄԱԿԱՆ
Բարիդ 22. — Գոց 12-90
Լինարայ 21. — Գոց 12 13/16
Այս առաւօտ բացուեցաւ 13-33
Թղթադրամ 319-20
Բումէլի 50-00

ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐԵՐ

Ատանայէն և Սիսէն հասնող սպտմ. 6, 7 և 9 թուականու հեռագիրք կ'իմանուցանեն թէ՛ օսմ. զօրքերը յաղթութիւններ ընելով Գօշանի ապստամբաց զէմ: ասանց ձեռքը գտնուած տեղերուն մեծ մասը, Հաճըն, Պիլանքէօյ, Ֆէքէ և ուրիշ կարևոր գիւղերն սուտեր են, ուստի և այս տեղեաց գալմագամներն ու միւտիւրներն, որոնք ապստամբապետ Գօշան օղլու Ահմէտ բաշայի յարձակմանն առնէ՝ թողլով տեղերին ոմանք Առանա և ոմանք կեսարիա քախեր էին, սկսեր են նորէն տեղերին դառնալու պատրաստուիլ: Ահմէտ բաշայի հետ մայ.

բաքաղաքէս Գօշան երթալով այն կողմի ժողովուրդներն ապստամբութեան գրգռող վէշունէտար Սէհմէտ Էֆէնտին Հաճընի ժողովուրդաց կողմէն բռնաւորով բանտարկուեր է:

Սիսի և Ատանայի մէջ հեռագրական հաղորդակցութիւնը դեռ խզուած են: Օսմ. զօրքերըն Չաթմալըն գրաւելուն վերայ Ահմէտ բաշա իր բնիկ երկրն եղած Պիլանքէօյի և Ֆէքէի կողմերը փախած էր, ուրկէ ալ ելնելով Գօշան շերան Արեւելեան կողմի գիւղերուն մէջ ապստամբեր է, բայց ստուգիւ ուր տեղ գտնուիլը յայտնի չէ:

Այս կողմերուն օսմ. զօրաց ձեռքն անցնելուն վրայ, Սիսի և շրջակայ տաճիկ բնակիչներն ու երևելիներն, ինչպէս նաև քրիստոնէայ եկեղեցականաց հետ ժողովուրդն ալ հետզհետէ սկսեր են տեղերին դառնալ:

Իղգէթ բաշա, Սիսի և շրջակայից ապստամբութեան հասմար, բաւական զօրօք Լիվա Մազհար բաշան Սիս թողլով, ինքն ալ սկսեր է դէպ ի լերան ներսերը քալել Ահմէտ բաշան բռնելու և ապստամբութեան վերջին հարուածը տալու հասմար:

Ահմէտ բաշայի մարդիկը Տօրոս լեռան Ատանայի կողմը գտնուող տեղեաց, ինչպէս նաև յունարեակ գիւղերուն բնակիչները ոտք հանել աշխատեցնուն հակառակ, քրիստոնէոյք տեղերնուն սեղամ չժարթելով, հընադանդութեան մէջ մնացիւ են:

Ահմէտ բաշա 2000 հօխայի չափ վառօք շիւեկ տալով, այն կողմի այս տարուան հունձքերուն տասանորդներն ալ ժողվեր համբարեր է:

Թուրքի խաղաատար խալիթաին բաշա շր. օր մայրաքաղաքս հասնելով ուղղակի Տօրմապահձէի պալատին մէջ իրեն համար պատրաստուած յարկն ինչեղէն յետոյ, Երլաբզի պալատը գնաց Սուլթանին ներկայանալու, և երեկոյին ալ ընթրիքը Երլաբզին ընելու հրաւիրուեցաւ, ուր ներկայ կ'գտնուէին Եպարդոսը և Պարսկաց զէսպան Մօհսին Խան:

Միտհաթ բաշա ուրբաթ օր Մարսիլեայէն շոգեհաւ նըստեր է Շիրա ելլալու:

Ռուսք Այսթէֆանօն բոլորովին պարպած ըլլալով, այսօր ըստ զինուորական օրինի՝ օսմ. իշխանութեանց ձեռքը պիտի յանձնուի, և Ֆրանսա բաշայի բանակէն 3 զօրագունք (Լիվա) այսօր Այսթէֆանօ մըտնելով պիտի գրաւեն:

Կըսուի թէ տաճիկներն մինչև Չաթմալճա ձեռք անցնելէն յետոյ, անկէ ապգին՝ Կ. Պոլսոյ պաշտպանութեանը համար երկրորդ և աւելի զօրաւոր ամբուլթեանց նոր զիմ մ'ալ պիտի սկսին եղեր շինել:

Չրոյց կայ թէ Պրուսայի կուսակալն հրատարեր է:

Թանի Կ. Պոլսոյ թղթաւ կիցը հետեւեալ զուարճալի զէպքը կ'հաղորդէ իւր թերթին:

Վերականգնողական ամսուհի մէջ, կըսէ, վստահութի շոգենաւուց միտն մէջ օսմ: զինւորական մը նստած համարիչ կ'ըսէր, և հաւանականաբար ծովը քանակ էր: Անոր քով ալ Անգլիացի մը նստած սիկառ կ'ըսէր: Տաճիկ սպայն տեսնելով որ Անգլիացին իր ծովը բանի տեղ չդնելով կ'ըսէր, է՛հ Կառլոս կըսէ: Անգլիացին այս խօսքը չէ հասկնալով երբ քովիններուն կ'հարցունէր նշանակութիւնը, տաճիկը զայրանալով նշանակութիւնը իրեն հասկցնել կ'ուզէ և լաւ մը կ'ըսէ զանի, որն որ չհամարձակելով դէմ դնել տաճիկին՝ ծեծը կ'ուտէ վառաւորացիս:

Թղթակիցը կըսէ թէ շոգենաւուհի անցորդաց մեծ մասը Յոյն ըլլալով, երբ զարմանք յայտնէր է Անգլիացիին Տաճիկին ծեծ ուտելուն վրայ աւանց պահած լուսթեանն ու անտարբերութեանը, պատասխաններ են Յոյներն թէ — «Այս վերիւր անձինքը (Տաճիկն ու Անգլիացին) իրենք մէջերին անկողնա-տաճիկական պայմանագրութիւնը կ'որոճաղբեն կոր, «մեղի՞ ի՞նչ»:

— Բամազան մտանք, կ'ըսեն իւսկիւրէն ֆուրիէի Հոս քրիստոնեայ ժողովուրդը կ'սկսին զղալ Պերլինի Տէրութեանց ժողովին որոշմանց արգիւնքն, որ կ'յայտարարէր թէ ամեն կրօնք ազատ է: Իսպիւրի փողոցներուն մէջ իմամ մը կ'պարտի երկաթածայր գաւազան մ'իձեռնին, և չարաչար կ'հարուածէ բոլոր քրիստոնեայներն ու հըրեայներն որոց ծուխ քաշելը տեսնէ, և մինչև խանութներուն խորը կ'հալածէ: Եւրոպացի մ'ալ այս երեքշաբթի օրը ծեծ կերաւ յիշեալ Տէրութիւնէ, և փախչելով շունչը կառավարութեան պաշտօնատունն առաւ, ուր ոստիկանութեան զինւորաց հազարագետին պատմեց գիտուն եկածը: Իշխանութիւնն բոտ ստիբութեան բան մը չըրաւ, այնպէս որ Հրեայ մ'ալ վաճառատան մը մէջ նորէն հարուածեցաւ յիշեալ իմամէն: Իսկիւր բնակեալ 50 չափ Եւրոպացիք, ծուխ քաշելու համար հարկադրեալ են մինչև երկաթուղու կայարանին մօտ սրճարան մ'երթալ, և ահա մը կազմելով ծխել:

Հնար է մտածել թէ այսպիսի մոլեաւանք մը կարող ըլլայ իւր հաճոցից համեմատ, ամենուն աչաց առջև, իշխանութեան զիտութեամբն այսպիսի բանութիւններ բնել բաւական բազմամարդ քաղաքի մը մէջ: Այս Տէրութիւն է որ անցեալ տարի ալ քիչ մնաց Գերմանացի Հայպախ մեքենագործը պիտի սպաննէր ծուխ քաշելուն պատճառաւ: Ասկէց կ'տեսնուի որ միշտ միևնոյն դրութիւնն է ոչ-մահմանականաց վիճակին մէջ բարեբաւութեան չկայ հակառակ ի գետպանախորհրդոց, տէրութեանց ժողովոց, դաշնագրութեանց:

ՕՐԱՑՈՅՑ
1879
ՏԱՐԻՈՅՆ

Երուսաղէմայ միաբանութեան վանքէն ի լոյս ընծայուած է յաւանական տարուան Օրացոյցը, որն որ մեր ազգին սովորական սուրբէն և աստղաբաշխական երևութից զետեղեցներէն ու ծանօթութեանն զատ կ'արտունակէ նաև աշխարհի նշանաւոր անցից ժամանակագրութիւնը և քաղաքական ընդհանուր հանդիսաւոր սոնախմբութեանց ցանկը:

Կ'ձախուի բոլոր գրավաճառաց քով ի զին հարկեր փարայ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ
ԳՐԵՑ
Ս.

Սոյն փոքրիկ երկաթուղիները որ եղբարական սիրոյ ձօն մ'է, կը պարունակէ գողարկի խորհրդածութիւններ, որ պատու կը բերեն երկտասարը հեղինակին:

Կեդրոնատեղին է Սրապեան Պաղտատար ազգի գրատունը Մէրեան փողոց, և զանուի նաև բոլոր գրավաճառաց քով: Գին մէջ հինգնոց թղթագրամ:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ
Երուսաղէմայ Միաբանութեան

Ս. Յակովբեանց տպարանէն այս անգամ մաքուր տպագրութեամբ ի լոյս ընծայեալ այս գործը, որ 526 երեսէ բաղկացեալ զիրք մն է, Հին Կտակարանի պատմութեան զխաւոր ու երեւելի անցից ուսմանը մասին վարժարանաց ու նախակրթարանաց մէջ յաղորդութեամբ գործածուելու ընտրութիւն և արժանիք մը ունի:

Կը գտնուի բոլոր գրավաճառաց քով, ի զին 7 զչ ողջ գրամ:

ՀՈՄ ԴՊՐՈՅ ԱՂԶԿԱՆՅ ՀԱՄԱՐ

Այս գործը վերստին պիտի բացուի Սեպտեմբեր 8/17ին Իւսկիւր, Ալեքսանդր թաղը, Հայոց եկեղեցւոյն մօտ, Գիւրգէի պաշտօնատնէն թիւ 16 նորոգէն յարմար եւ գեղեցիկ տան մէջ:

Գարոցին լեզուն Անգլիերէն է: Առողջութեան եւ հանդստեան, ինչպէս նաև դաստիարակութեան մէջ յառաջադիմութեան համար զպրոց մեծամեծ առաւելութիւններ ունի Անոնք որ այս առաւելութիւնները ստուգել կը փափաքեն կրնան անձամբ դալ եւ տեսնել շարժումն մէջ որ օր օր կ'ուզեն, յայ ի կերակի օրերէ:

Ծ Ս ի Բ

Գեղերթիկ աշակերտաց համար տարին 28 լիրա: Յորեկուան աշակերտաց համար տարին 6 լիրա: Գաշակի համար տարին 6 լիրա: Ետտ փոփաքելի է որ վարժարանը ընդունուի ուղղա աշակերտուհիք ներկայ դասուին շրջանին առաջին օրը:

Հարսթիւս ՇԲ. 9 Սպամ:
ԸՆԴՀ. ՊԱՐՏ. ՍՐԺ.

Բաց	13.33
Գոց	13.32
Բարձր զին	13.36
Յաճ զին	13.30
Թղթագրամ բաց	316.20
բարձր	319.20
ցած	316.20
ժամը 11	319.00
Փոխ. 63/ի	Ֆր. 080.00
» 65/ի	» 085.00
» 69/ի	» 080.00
» 73/ի	» 070.00
Գանձատուն	24.50
Սօսիէթէ Ժէնէրալ	4.00
Սօսիէթէ Օթօման	3.15
Պանք ալ Բօնսթ.	6.25
Քրէտի Ժէնէրալ	5.00
Թրամիէյ	1.55
Բուս. երկաթուղի	49.75

ԸՆԴՈՒՅՐ ԴՐԱՄՈՅ

(Օս. սկի 100 ր. 1 հարմ.)
Անդը սկի 109.08
Գաղը » 87.18
Բօլ 89.08
Քարպօն արծաթ 16.20
» թղթագրամ 11.00
Քրքմից 51.07
Հինգնոց 20.20
Մէթալիք 20.30
Ճերմակ մէծիտ 06.10
Պղինձ 178.20

ՄԻՆԱՍԵԱՆԻՆ ՄԱՂԱԶԱՆ

ԳՏՆՈՒԱԾ ՈՒ ՓԱՆԱՍԷ

Կոչուած ցաւի դեղը բոլորովին բուժողունքէ բնորոշուած ըլլալով թէ ներսէն և թէ՛ գուրսէն կը գործածուի ու բազմաթիւ ցաւեր ու հիւանդութիւններ շուտով կը բժշկէ, ինչպէս որ վարը յիշուած է:

Ամեն տեսակ ֆոլի, Բոսամբուսի, մէլքի կամ օղիքներու ցաւեր, ու նաև Թանջը, Քօլերա և այլ ամուռուան հիւանդութիւններ ունեցողները այս դեղէն խմելու են հետեւեալ կերպով: Կէս գաւաթ ջուրի մէջ, զիր ապուրի մը զրգալէն աւելի շաքար, վրան լեցուր անուշի զրգալ մը փանստէ աղէկ մը խառնէ ու խմէ:

Կոկորդի հիւանդութեանց, և Ուռեցքի համար դեղը վերոյիշեալ կերպով պատրաստէ ու ժամը կամ երկու ժամը հեղ մը՝ մէկ կամ երկու անուշի զրգալ այն բազադրութեան խմէ: Յօդացաւի, Բիւնսթիլմի, Ուքի ցաւի, Ստամբուսի ու տեսակ տեսակ կանակի ցաւերու համար գուրսէն փանստէ քաշելով աղէկ մը շփելու է: Այլուայի ցաւի համար քիչ մը բաւական փանստէի մէջ թաթիլելով ցաւած ախտային վրայ դնելու է:

Ամեն տեսակ երբոր ցաւի մը համար գուրսէն փանստէ քիչ հարկ կըլլայ, եթէ քիչ մը ալ խմուի աւելի շուտ բժշկութիւն կըլլայ:

Մարմնոյ սյրուած կամ ճմլուած տեղերը բժշկելու համար վրան զը պատահածին տէս փանստէին վրան աղէկ մը լեցնելու է: Գանալով և ին կորուած վերքերը բժշկելու համար՝ արիւնը շորած շուտով մը վերքը կապելու և զապին վրայէն փանստէ լեցնելու է մինչև որ լաւ մը

թրջի: Փանստէն նաև արեան շրջանը նարազացնէ ու բոլոր բնութիւնը կը զօրացնէ:

Այս դեղին օգտակարութեանը վրայ երկարօ էն գրել աւելորդ կը համարուի, գործածողները զայն միշտ կը գոյնեն, ուղաղը կրնայ անձամբ փորձել. գինն աժան է: Կը ծախուի Միւնստեան և Ընկերաց Ամերիկեան վաճառատունը որ ի Ղաւթիւս Կ. Պօլսոյ:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԵՐԱՌՏԱՍԱՆ ՊԵՏԱՐԱՑ
ԳՈՐԾ ՍՈՒԷՏՈՒՆՈՍԻ
Թարգ Էմեայ Ե. Մ. Ս.

Սոյն պատմութեան երկրորդ և վերջին հատորն ալ իզմիրի Տէտէեան եղբորոց տպարանէն ի լոյս ընծայուելով, կ'ըստի ի Ենի-ճամի Զիլինկիրէր ճատատէսի թիւ 2 Ս. Ղուկասեան գրատունը, և ուրիշ գրավաճառաց քով: Գին 1 ֆրանք 25 սանթիմ:

ՄԷՌՈՏԻ ՎՐԱՅ

Գ. ԿՈՍՏԱՆԴՆԱՆ
Արեւելեան գիտական ճարտարագէտ

Սոյն առաջին հատորը որ 165 երեսէ կը բաղկանայ, իզմիրի Տէտէեան եղբորոց տպարանէն ի լոյս ընծայուելով կը ծախուի Ենի-ճամի Զիլինկիրէր ճատատէսի թիւ 2 Ս. Ղուկասեան գրատունը եւ ուրիշ գրավաճառաց քով:

Գին մէկ քառորդ մէծիտ

ՀԱՄԱՌՈՏ

ԸՆԴՀ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՊՊՐՈՑԱՅ ՀԱՄԱՐ

Մամուրեան էֆէնտի յօրինած և իզմիրի Տէտէեան եղբորոց տպարանէն ի լոյս ընծայուի գործին երկրորդ մասը, այն է Միլլին Գարու պատմութիւնը որ 508 երեսէ կը բաղկանայ, Պօլսո հասած ըլլալով, կը ծախուի Ենի-ճամի, Զիլինկիրէր ճատատէսի թիւ 2, Ս. Ղուկասեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով:

Գին կազմեալ օրինակին 4 ֆրանք:

ՏՕՔԹՕՐ ՄԻՀՐԱՆ ԷՅԷՆՏԻ

ԳԱՅՅԱԿԱՆ

Մեծ Տօքթօր. Մ. Գալֆայեան էֆէնտի, հինգաթի օրեր ժամը 8 էն մինչև 9 Կ. Պօլսո կէտիկ բան շա, Միւսէլիմ ճատատէ փողոցը 17 թիւ իւր տունը, երկուշաբթի օրերու ժամը 2 էն մինչև 3ը կոսկա Գերմանեան Կարթիլ էֆէնտի դեղաբանը ճրիարար հիւանդ նայելով, Երեքշաբթի և ուրբաթ օրերն ալ յարձնալ իր տունը ժամը 5 էն մինչև 8ը հի անդ պիտի ընդունի:

ԳՈՐԾ ՆԱԿԱՆ

ՏՕՄԱՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ
ՊԱՐՏ ԵՒ ԿՐԿԻՆԱՏՈՒՄ ՍՐԺ
ՈՐ ՊԱՐՈՒՆ ԿԵ ԱԿԵ

Փոխանակագրի, հաշուեցոցի, բեռնագրի, վարկագրի, հաշուեցոցի և այլոց ձևեր և օրինակներ: Ի ՊԵՏՍՍ Վարժարանաց և վաճառականաց Ի ՏԻՉԷՆՃԵԱՆԷ

Տպագրեալ արդեամբ և ծախիք Մ. Տիգրան էֆ. Գարուկէօղեանի:

Կեդրոնատեղին է Պօլսո Մէրեան շարք թիւ 55 Սրապեան Պաղտատար աղոյի գրատունը: Բերոյ Մ. Վայսի գրատունը եւ ուրիշ Հայ գրավաճառաց քով:

Գին կազմեալ օրինակին երեք քառորդ մէծիտ:

Ի ՏՊԱՐԱՆԻ

ՆԻԿ. Մ. ԹԻՒԼՊԷՆՃԵԱՆ